ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» հոկտեմբերի 2022 թվականի N:558-Ա ք.Գյումրի

ԵՂԻՇԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ՝ «ՋԱՋՈՒՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-րդ մասի, 111-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժդ» կետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ 2022 թվականի հոկտեմբերի 25-ից դադարեցնել Եղիշե Խաչատրյանի՝ «Ջաջուռի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունները՝ լուծելով նրա հետ 2019 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված N:57 աշխատանքային պայմանագիրը:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է